

մէջ կ'երենայ և կ'ըսեն թէ Շաելայ տաճարն է . ասիկայ է Շաբելոնի տերակներուն մէջ ամենէն զարմանալին : Արաբացիք Պիքու Ա, Էրուտ կ'ըսեն ասոր կամ Շալու Ա, Էրուտ Ա-այ, իսկ Նրեայք Շահնար Ա, աբու Գողոսոսորայ, որ բարձր հողաբլուր մըն է շրջապատը 684 մէթր, արևելեան կողմը Ճեղքուելով 18 մէթր բարձրութեամբ խոր փռ մը ձեւացած է, մէկալ կողմերը բոլոր աւերակ . աղիւմներու կտորներ ասդին անդին ըլուրի պէս զիզրւած . մեծ հողաբլուրն ալ նոյնապէս հին աւերակ մըն է սե կոտրած քարերէ, մարմարիսնի կտորներէ ու խճերէ ձեւացած . այսպիսի հողաբլուրներ ուրիշ կողմեր ալ շատ կան և աւելի մեծութեամբ : Շաելայ մեծ տաճարը Երողուառի ըսածիննայելով ըրգածե պիտի ըլլայ, կամարասիւները խեցեմորթներով զարդարած, ՇՀ հանուր նիւթը աղիւս՝ արեւուն կամ փռան մէջ եփած, և որպէս զի չէնքերը գեղեցիկ երեւնան՝ կը գունաւորէին ու վեռնիճ կուտային անոնց : Ուազաւորա-



Ուագաւորական պալատին աւերաները :

կան պալատը որուն պարսպին աւերակներն են պատկերիս մէջ երեցածները, զարդարած է եղեր կենդանեաց արձաններով ու իրենց ընական գոյնը վրանին տպաւորած . վասն զի նախ կը նկարէին կղմինտուի վրայ ու ետքը կ'եփէին . Ոիչ տեսաւ ասոր աւերակներուն մէջն ելած մէկ վիթխարի առիւծ մը Ճերմակ կրանիտէ : Ումանք կ'ըսեն թէ Շամիրամ Շաբելոնի մէջ շատ փառաւոր շնէքեր շնէլէն զատ քարէ կոթող մըն ալ կանգնեց 38 մէթր բարձրութեամբ, և թէ աս միակտուր քա-

րը Նայաստանին բերաւ . բայց հիմա իմացուեցաւ որ Նիթթ ըսուած տեղէն վեր լեցուն է աս տեսակ քարի հանքեր : Շրիտանիայի թանգարանին մէջ Շաբելոնի կղմինտոներուն շատ տեսակը կայ, նոյնպէս վարպետ բանած քարեր, ինիքով հանդերձ մատանիներ : Շաբելոնի աւերակացը մէջ գտնուեցան նաև մանր գլանաձեւ քարեր մէջերնին ծակ, որոնց վրայ խորհրդաւոր տեսարաններ փորուած են ինչպէս մարդկան բազմութիւն, անասուններու հօտ և այլն . աս գլաններէն ոմանք կաւէ են, ոմանք աղնիւ քարերէ . Եշիրատին մէջէն հանած անօթ մը գտան ու անոր մէջ շատ դրամներ Եցեքսամնդրի և իրեն յաջորդներուն, բայց անոնցմէ զատ երկու դրամ ալ՝ որ հին Շաբելոնի դրամ սեպուեցան :

\*\*\*\*\*

Բայդանուր Վիճակգրութիւն աշխարհի բաշխամարդութեանը :

Ուկ որ սովորական կարծիքով մը ենթագրենք թէ աշխարհիս վրայ հազար միլիոնի չափ ընակիչ կայ, և թէ մարդուս կենաց միջին երկայնութիւնն է 33 տարի, ըսել է թէ աս 33 տարուանս մէջ 100 միլիոն մարդ կը մեռնի, որով մեռնողներուն թիւը կ'ըլլայ

Եմն տարի 30, 000,000,

Եմն օր 82, 000,

Եմն ժամ 3, 400,

Եմն վայրկեան 60 :

Ուկ որ մարդիկ չի մեռնէին՝ ինչուան հիմայ երկրիս վրայ 173 հազար միլիոնէն աւելի ընակիչ կ'ըլլար, և որովհետեւ բոլոր երկրիս ցամաք կտորին մակերեսոյթն է 1587 միլիոն քառակուսի ոտք, ան ատեն 109 հատ զրեթէ երկրիս պէս ցամաք պէտք էր որ այսչափ բազմութիւնը մէյմէկ քառակուսի ոտք տեղւոյ մէջ սղմէին :

Ենթագրենք դարձեալ թէ աշխարհիս ստեղծուելէն ինչուան հիմայ 5700 տարի է, կամ յիսունը եօթը դար, և

որովհետև ամէն դարու մէջ մարդկութիւնը իրեք ազգ կամ պորտ կը փոխուի, ուրեմն աշխարհքիս սկիզբէն ինչուան հիմայ 171 ազգէն աւելի չելլար, 117 ինչուան Քրիստոս, 54 ալ Քրիստոսէ ետեւ :

Արկրիս ամէն կողմը հաւասար չէ բնակչաց թիւը, այլ խիստ տարբեր մէկ մէկէ . անանկ որ համեմատութեամբ թէ որ նոյնչափ միջոց տեղւոյ մէջ

Խոլանտա 1 հոգի կ'ապրի  
Կորվեկիա 5 հոգի կ'ապրի նոյնչափ  
միջոց տեղ,

Ըուետ	14
Տաճկաստան	36
Լէ հաստան	52
Սպանիա	63
Իռլանտա	99
Զովիցերի	114
Մէծն Բրիտանիա	119
Գերմանիա	127
Անգլիա	152
Գաղղիա	153
Իտալիա	172
Նախոնի	192
Վենետիկ	196
Հոլանտա	224
Մալթա	1103

Ուրեմն աս աղիւսակէս կ'իմացուի որ աշխարհիս մէջ համեմատութեամբ ամենէն քիչ բնակիչ ունեցողը Խալանտան է, իսկ ամենէն շատ Ալթան :

Դյանդեանց և մահուանց և ամուսնութեանց վրայ աս հաշիւները գըտնուած են :

Պոհերաւի քննութեանցը նայելով յունուար, փետրուար ու մարտ ամիսներուն մէջ տղաք աւելի առողջ կը ծնանին :

Փետրուար ու մարտ ամիսներուն մէջ շատ ծնունդ կ'ըլլայ :

Լարգուած կանայք ամէն երկրի մէջ ալ իրենց սեռին հետ գրեթէ 3 էն 1 կը համեմատին . իսկ երիկ մարդիկ 5 էն 3 կը համեմատին :

1 հիմակուան կենաց չափին համեմատութեամբ այսպէս է . բայց որովհետև նահապետք երկար կ'ապրէին և ըստ այնմ ուշ կ'ամուսնանային, ազգաց միջոցը երկայն կ'ըլլար թիւը քիչ . ասանկ ինչուան ջրհեղեղ 10 ազգ կը համրուի, անկէ ալ ինչուան Արբահամ 10 ազգ, անկէց ինչուան Քրիստոս 42 ազգ, կը համրէն աւետարանիցք . բոլորն կ'ըլլայ 62, որոնց վրայ Քրիստոսէ ինչուան հիմայ 54 կամ 56 ազգ ալ աւելցնելով կ'ըլլայ ամէնը 118:

Եւրոպայի մէջ, որ զրեթէ 225 միլիոն բնակիչ կայ, տարին միջին չափով 1,855,000 ամուսնութիւն կ'ըլլայ, կամ 121 բնակչաց 1 . որովհետև թէ ամէն տարի իւրաքանչիւր սեռին 60երորդ մասը աշխարհք կը մանէ . իսկ ամուսնութեանց բարձրագոյն թիւն է 100 էն 1, իսկ նուազագոյնն է 163 էն 1 : Համեմատութեանց բնակչաց թուղյն՝ Գերմանիա իրեք անգամ աւելի ամուսնութիւն կ'ըլլայ քան թէ Ապանիա և Փորթուգալ . Փարիզ երկու անգամ աւելի կ'ըլլայ՝ քան թէ Ֆերապուրկ :

Առվորաքար ողջերուն թիւը ամէն տարի ծնածներուն 4 էն 26, 27, 28 է . բայց ամէն տեղ միակերպ չէ . բարձրագոյն թիւն է բազմամարդ երկիրներու մէջ 4 էն 22, 23, ինչպէս են Խալիխյ քանի մը գաւառները . իսկ նուազագոյն թիւն 4 էն 35 և ինչուան 44, ինչպէս են Ակովտիա, Կորվեկիա և Տանիմարքա . և աս բանիս պատճառն է կիրամայի տարբերութիւնը որ մեծ ազդեցութիւն ունի . իսկ սեռի համեմատութիւնն է 105 արու, 104 էգ :

Ինդհանրապէս իւրաքանչիւր ծնրնդեամբ մէկ հոգի աշխարհք կուգայ . բայց հաշուով իմացուեր է որ 70 ծնրնդոց մէջէն 1 ը երկուորեակ է . 7000 էն մէջէն՝ 1 ը եւածին է, 50,000 էն մէջէն՝ 1 ը քառածին, շատ միլիոններու մէջէն՝ 1 ը հնդածին : Իւրաքանչիւր ամուսնութեամբ, իւրարու վրայ զարնելով՝ 3, 4 տղայ կը ծնանին . 50 ամուսնութեանց մէկն այլ ամուլ կը սեպուի : Լարգէ դուրս ծնունդներ ալ կը յիշուին, որոնց ամենէն զարմանալին է, թէ որ ստոյգ է, մէկ ուռւաստանցի մը որ առաջին ամուսինն 27 ծննդեամբ 69 տղայ ունեցեր է, երկրորդ ամուսինն ալ 18 ծնրնդեամբ 18 տղայ, և բոլորը մէկն 87 տղայ, որոնցմէ 83 հատը հօրերնուն 75 տարեկան եղած ատենը գեռ ողջ են եղեր :

Արդուս կենաց երկարութիւնը ամէն տեղ և շատ դարերէ՝ ի վեր ընդհանրապէս 70 էն 80 է : Լանայք աւելի երկար կ'ապրին քան թէ երիկ մարդիկ .

և զանազան երկիրներ եղած դիտողութիւններէն կ'իմացուի որ թէ որ էրիկ մարդկանց մէջէն 100<sup>ε</sup> 90 տարին կը հասնին , կանանց մէջէն՝ 178<sup>ε</sup> . թէ որ էրիկ մարդկանց մէջէն 100<sup>ε</sup> 100 տարին կը հասնին , կանանց մէջէն՝ 155<sup>ε</sup> . աս ալ դիտուած է որ ամուսնացեալ կանայք աւելի կ'ապրին քան թէ ամուսինները : Ի՞այց կարգէ դուրս երկար ապրող՝ աւելի էրիկ մարդկանց մէջ տեսնուեր են . ինչպէս 180 տարեկան մեռեր են 1 սկովտացի մը , 1 հունգարացի մը և 1 խառն ամերիկացի մը . 160 տարեկան մեռեր են 1 նորվեկիացի մը , 1 եամայիքացի սև մը . 146 տարուան մեռեր են 1 տանիմարքացի մը , 1 եամայիքացի սև մը , և այլն :

Մեռած ծնած տղոց թիւն է 22<sup>εն</sup> 1 :

1,000 հոգի մեռողներուն մէջէն ,

221 հատը 1 տարեկան է

77	"	2	"
39	"	3	"
<hr/>			
337			

բաել է թէ 1000<sup>εն</sup> մէջ երրորդ մասէն աւելին առջի իրեք տարուան մէջ կը մեռնի : Այլ և այլ հասակի մէջ մեռնողներուն վրայ եղած քննութիւններէն կ'իմացուի որ մարդուս կենացը ընթացքին մէջ ժամանակի կայ որ աւելի կամնուազ ենթակայ է պատահական մահուան :

Ի՞նչի տարուան մէջ 4<sup>εն</sup> 1<sup>ε</sup> կը մեռնի . առջի իրեք ամսուան մէջ աւելի շատ , առջի ամսուան մէջ աւելի շատ , առջի շաբաթուան մէջ աւելի շատ :

Խակ

1էն ինչուան	2 տարեկան	10էն 1 կը մեռնի ,
7էն ինչուան	8 "	60էն 1 "
13էն ինչուան	14 "	147էն 1 "

Ի՞այց 9<sup>εն</sup> ինչուան 20 տարեկան մեռնողներուն թիւը 100<sup>εն</sup> 1 հազիւ կ'ելլէ . 20<sup>εն</sup> ինչուան 50 , 40<sup>εն</sup> 1 հազիւ , 50<sup>εն</sup> ինչուան 74 , 10<sup>εն</sup> 1 հազիւ :

Մօրերնուն կաթով մեծցած տղոցմէ 1000<sup>εն</sup> 31<sup>ε</sup> հազիւ կը մեռնին . խակ ծծմարց կաթով մեծցած տղոցմէ 1000<sup>εն</sup> 50<sup>ε</sup> կը մեռնի :

Ովլորաբար ծաղկէն բռնուող տղոց

մէջէն 100<sup>εն</sup> 8<sup>ε</sup> կը մեռնին . խակ պատուաստէն 300<sup>εն</sup> 1<sup>ε</sup> կը մեռնի :

Աշխարհիս վրայ ծնածներուն կէսը 17 տարին չհասած կը մեռնին :

Ծուրտ ատեն մեռնող ծերերուն թիւը տաք ատեն մեռնողներուն հետ ինչպէս 7<sup>ε</sup> առ 4 կը համեմատի : Ի՞ելի բարձր երկիրներ ծեր կը գտուին , քան թէ ցած երկիրներ :

Քաղաքներու մէջ 24<sup>εն</sup> , 25<sup>εն</sup> , 26<sup>εն</sup> , 27<sup>εն</sup> , 28<sup>εն</sup> 1<sup>ε</sup> կը մեռնի , խակ գեղերուն մէջ 30<sup>εն</sup> և կամինչուան 45<sup>εն</sup> 1<sup>ε</sup> :

Խակ կենաց երկարելուն վրայօք ասանկ հաշիւ մը կ'ըլլուի համեմատաբար :

Ո՞էկ նոր ծնած տղայ մը դեռ կընայ ապրիլ . . . 34 տարի և 6 ամիս ,

1 տարեկանը դեռ	41 տարի և 9 ամիս ,
կընայ ապրիլ	

3	"	45	"	7	"
5	"	46	"	4	"
10	"	44	"	9	"
15	"	41	"	6	"
20	"	38	"	3	"
25	"	35	"	3	"
30	"	32	"	3	"
35	"	29	"	8	"
40	"	26	"	6	"
45	"	23	"	0	"
50	"	20	"	11	"
55	"	17	"	0	"
60	"	14	"	0	"
65	"	11	"	5	"
70	"	8	"	11	"
75	"	6	"	8	"
80	"	4	"	10	"
85	"	3	"	3	"
90	"	2	"	0	"